



ԹՈՒՊ

№ 8

• ԹԻՎ 8
ԱՊՐԻԼ
2012 Թ.

(Բուն Հայոց 4504 ք.)

Լույս է տեսնում
2009թ.
Հոկտեմբերից

Համախմբվե՛նք յուրաքանչյուրիս և ընդհանուր խնդիրների շուրջ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Ձեզ սեր, կանացիություն և գարնանային թարմություն, սիրելի՛ կանայք ու աղջիկներ:

Մեզանում գարնան մուտքը նշանավորվում է կանանց միանայակուն, որի շրջանակներում տարաբնույթ միջոցառումներ են արվում, հնչում են գեղեցիկ խոսքեր, խորհմաստ մտքեր... Այնպիսի տպավորություն է, որ տղամարդիկ իրենց բոլոր հույզերն ու ամբողջ վերաբերմունքը պետք է հասցնեն արտահայտել անպայման այս միանայակի ընթացքում ու կարծես միայն այս ժամանակահատվածում են կարողանում գնահատել գեղեցիկը: Սակայն, իրականում հայ տղամարդիկ կնանկներ են ու բավականին բարձր են գնահատում հայ կանանց ու նրանց դերը ընտանիքի ու ազգայնագիտության մեջ:

Դարեր շարունակ հայ կինն ու տղամարդը օրինավոր ընտանիք են կազմել, փոխադարձ սիրո ու հարգանքի մթնոլորտում զավակներ մեծացրել, վերջիններիս համար օրինակ ծառայելով և նրանց հաղորդելով այն ամենակարևորն ու թանկը, ինչը նոր սերնդին օգնում է դառնալ ավելի կենսունակ ու հեռանկարային: Սա մինչև վերջերս...

Մինչև որ վերջերս «գեղեցիկ»-ն ու «գեղեցիկներին հավասարություն»-ը դարձան բերանի ծամոն և հասարակության «մտահոգության» առարկա: Փաստացի շատ են արտաքինից եկող ծնունդները, որպեսզի այդ «գաղափարը» հնարավորինս շատ շրջանառվի մեզանում: Համենայն դեպս այս թեման գրանտների միջոցով խրախուսում են միջազգային դոնորներն ու յուրաքանչյուր իրեն հարգող կազմակերպություն իր պարտքն է համարում անդրադառնալ թեմային: Ընդ որում ներկայացնում են ով ինչպես կարողանում է, ինչքան հասկանում է, նույնիսկ երբեմն կարևոր չէ, որ չեն էլ հասկանում: Կարևորը թեման շոշափելու, նրա մասին ամպագորգոք բաներ ասելու պատրաստակամությունն է, որը, բանից պարզվում է, լրիվ բավարար է գրանտ ստանալու համար:

Կանանց իրավունքների ավանդական ու նորաթուխ պաշտպանները գեղեցիկ ներկայացնում են որպես գեղեցիկ սեռի իրավունքների պաշտպանության համակարգ, «ավելի լավատեղյակներն» այն ներկայացնում են որպես սեռերի միջև իրավահավասարություն: Վերջիններս կանանց կոչ են անում չհանդուրժել տղամարդկանց թելադրող դիրքը, ընդվզել դրա դեմ՝ մոռանալով բողոքի ցույց կազմակերպել ի պաշտպանություն այն տղամարդկանց, ում տանը թելադրող դիրքում կանայք են: Անձամբ ես այս ամենի մեջ տեսնում եմ մեր ընտանիքներում սեռերի համակերպության ներդաշնակության խախտման միտում, որի տրամաբանական հետևանքը պիտի լինի հասարակության բջջի՝ ընտանիքի քայքայումը, որն էլ իր հերթին սասանելու է պետության հիմքերը: Իսկ թե ում է դա ձեռնտու՝ առանձին թեմա է:

Իրականում գեղեցիկ սեռերի միջև սոցիալ-հոգեբանական փոխհարաբերություն-

ների մշակույթ է: Մշակույթ, որը ձևավորվել է երկար տարիների ընթացքում և յուրաքանչյուր առանձին դեպքում դրսևորվում է ինքնատիպ երանգներով:

Դարեր շարունակ հայկական օջախներում տղամարդն ունեցել է որոշիչ ձայն, սակայն դա չի խանգարել այդ նույն տղամարդկանց խոստովանելու, որ օջախի ամրության գրավականը եղել ու մնում է կինը: Ասել կուզի՝ ընտանիքի ավանդական մոդելում ոչ թե կնոջ դերն է նսեմացվել, կամ նրա իրավունքները ոտնահարվել, այլ հստակ դերաբաշխում է եղել, սահմանված են եղել խաղի փոխհամաձայնեցված ու ներդաշնակ կանոններ և կողմերը սիրո, փոխադարձ հարգանքի մթնոլորտում իրականացրել են իրենց դերերը: Խոսքս էի վերաբերվում առանձին դեպքերին, երբ կողմերից մեկն ակնհայտ ոտնահարում է մյուսի ինքնասիրությունն ու իրավունքները: Ավաճիկն ավելացնելով այն հանգամանքը, որ ժամանակակից կինն արդեն տևական ժամանակ է ինչ ձայնագուրկ չէ, կարող ենք ասել, որ ավանդական մոդելը այս վերջին հավելումով կարող է հավակնել դառնալու այն հիմքը, որի վրա կարելի կլինի կառուցել ու զարգացնել իրական գեղերի գաղափարը:

Իսկ ինչ վերաբերվում է կանանց ակտիվացման ճանապարհով իրավունքների հավասարության պահանջներ բարձրացնելուն, ապա առանձին դեպքերում կանայք այնքան են «ակտիվանում», որ ոգևորության ալիքի վրա մոռանում են իրենց կին լինելու փաստը: Չեն կարծում, որ կանացիությունը կորցրած ֆեմինիստները որևէ կերպ նպաստում են գեղեցիկի ճիշտ ընկալմանն ու տարածմանը մի միջավայրում, որտեղ կնոջ ու կանացիության մասին պատկերացումները լրիվ այլ են: Երբեմն, որևէ կնոջ մասին խոսելիս որպես մեծարանք ասում են. «տղամարդ կին է»: Անձամբ ինձ համար «տղամարդ կինը» նույնքան անընդունելի է, որքան կանացի տղամարդը:

Ըստ էության, «գեղեցիկի ջատագովները» արհեստականորեն սրելով խնդիրը, անհարկի միջամտելով նեղ անձնականություն ենթադրող հարաբերությունների մեջ պատճառ են դառնում այդ հարաբերություններում գոյություն ունեցող մշակույթի աղձատմանն ու ներդաշնակության խախտմանը:

Ժողովրդական խոսքն ասում է. «Յոթ չափիր, մեկ կտիրիր»: Այս տրամաբանությամբ առաջնորդվելու հորդոր ենք ուղղում բոլոր նրանց, ովքեր անցանկալի բարքեր են ներմուծում մեր միջավայր և տարբեր գաղափարներ աղավաղված տեսքով ներկայացնելով պոտորում են մարդկանց միտքն ու հոգին: Իսկ նրանց, ովքեր յոթ անգամ չափերուց հետո էլ շահադիտական նպատակներով շարունակում են աղտոտել հասարակական միտքը, հարկավոր է անվերապահորեն մերժել:

ԱՊՐԵՆՔ ԱՌՈՂՁ

Գարնանային տոներից մեկն էլ ծիծաղի օրն է: Ապրիլի 1-ը Հայաստանի կառավարության կողմից պետականորեն որպես հումորի և երգիծանքի օր է ճանաչվել 2006թ. փետրվարի 16-ին: Հայաստանում այն ավելի շատ տարածված է որպես խաբելու օր:

Ծիծաղի տոնը կրում է համաշխարհային բնույթ: Դեռ 20-րդ դարասկզբին արևմտյան եվրոպայի երկրների ապրիլմեկյան խաբելու ավանդույթն առանձին երկրներին բնորոշ ազգային կոլորիտ ուներ: Ֆրանսիայում այդ ավանդույթը կրում է «Ապրիլյան ծուկ» անվանումը, որին տարբեր բացատրություններ են տալիս, բայց ամենից հավանականը այն էր, որ այդ ժամանակ արևը գտնվում էր ձկան համաստեղության ներքո և ֆրանսիացիների կարծիքով ապրիլյան ծուկ անվանումը բավականին հարմար է այդ ժամանակին:

Իսկ Անգլիայում, ապրիլի մեկին կեսգիշերից սկսած յուրանքանչյուր կարող է կատակել իր մերձավորների հետ, անգամ խաբել: Կատակի գոհ դարձածները ստանում են «Ապրիլյան հիմար» անվանումը: Հակառակ Անգլիայի, Հայաստանի և Ֆրանսիայի Գերմանիայում և Ավստրալիայում ապրիլի 1-ը համարվում է անհաջող օր, այդ օրը ծնված մարդկանց բախտը չի բերում կյանքում: Ըստ լեգենդի այդ օրն է ծնվել նաև դավաճան Հուդան:

Ծիծաղն ու հումորը հարաբերություններ են կարգավորում, կոնֆլիկտներ են հարթում՝ կյանքը դարձնելով ավելի տանելի: Հաճախ ծիծաղեցեք, քանզի այն քաղցր է ու հաճելի, առողջարար է, որ բուժում է ոչ միայն ֆիզիկապես, այլ նաև հոգեպես:

Գայանե Գրիգորյան

Գլուխ եմ...

Ահա լրացավ 1 տարին, ինչ ես «Թռիչք»-ի անդամ եմ:

Այս մեկ տարվա ընթացքում շատ մեծ սիրով եմ այցելել կազմակերպություն և առաջին իսկ օրվանից ինձ զգացել եմ հարգատ փայլում: Իսկ «Թռիչք»-ի ավելի «ստաժավոր» անդամների իրականացրած ուխտագնացությունների, գործերի ու խնջույքների նկարները նայելով ափսոսանք էի ապրում, որ ավելի վաղ չեմ իմացել ինչ-որ գոյության մասին: Այս մտորումներն իմ մեջ առաջացրին ինչ-որ մասին ավելի շատ տեղեկություն իմանալու ցանկություն: Մի քանի թղթեր «քվիտրուլուց» հետո ես իմացա, որ «Թռիչք»-ի հիմնադրվել է 2003 թ. փետրվարի 13-ին (այն նշվում է որպես կազմակերպության ծննդյան օր) և իր գոյության առաջին երկու տարիների ընթացքում հասցրել է իրականացնել 4 դրամաշնորհային ծրագիր, իսկ 2009 թ-ից սկսել է վերակազմավորումը և հանդես է գալիս արդեն բոլորովին նոր, երիտասարդ կազմով, նոր գաղափարներով ու ավելի իրականացնելու մեծ ձգտումներով: Այդ թվակալից ի վեր ինչ-որ գործում եմ՝ լրագրողական, զեղարվեստական և հայորդաց խմբակներ, երիտասարական թև: Լրագրողական խմբակի աշխատանքների հիմքի վրա լույս է տեսնում «Թռիչք» թերթը: Կազմակերպությունը համագործակցում է ՏԻՄ-ի, տարբեր ՀԼՄ-ների, հի-ների և այլ կառույցների հետ:



Իր թեմայի մասին, որովհետև համարում եմ, որ բոլոր խնդիրների լուծումը հնարավոր է գտնել կրթության մեջ զարգացման և յուրաքանչյուր ոլորտում մշակույթի ձևավորման ճանապարհով:

Ինչպե՞ս ծնվեց «Թռիչք»-ի գաղափարը:

Պատանիների և երիտասարդների շրջանում հաճախ նկատում էի իրենց ազատ ժամանակը ոչ ռացիոնալ օգտագործելու երևույթ: Եվ այս ուղղությամբ քայլեր ձեռնարկելու ցանկությունից էլ ծնվեց «Թռիչք»-ի գաղափարը:

Իսկ ինչու՞ հենց «Թռիչք» և ինչու՞ հենց կրթամշակութային:

Կրթամշակութային, որովհետև համարում եմ, որ բոլոր խնդիրների լուծումը հնարավոր է գտնել կրթության մեջ զարգացման և յուրաքանչյուր ոլորտում մշակույթի ձևավորման ճանապարհով:

Ինչի՞ նուրմ հասնել «Թռիչք»-ը պատանիների ու երիտասարդների հետ տարվող աշխատանքում:

Լույս վառել: Որովհետև երբ մարդը շրջապատված է խավարով, առաջին միտքը, որ ծագում է նրա գլխում՝ լույս վառելու գաղափարն է... Այսօր «Թռիչք»-ն ինձ համար այն լուսավոր կետն է, որի վրա կարողանում եմ հենվել և, վերջապես, ես այստեղ ձեռք բերեցի իրաշալի ընկերներ, ովքեր միշտ պատրաստ են օգնելու ինձ:

Քեզ բարի թռիչք, իմ սիրելի «Թռիչք»: **Սևակ Համբարյան**

Մոլու՞ցք, թե հիվանդություն՞

Մեր օրերի դեռահասներն ունեն բազմաթիվ կուռքեր, որոնց փորձում են նմանվել և անգամ կրկնօրինակել: Վերջիններս իրենց համար կուռք են դարձնում այն արտիստին, ում գործն են հավանում, տեսքը, պահվածքը... Երկրպագուներին հետաքրքրում է տվյալ արտիստի հետ կապված ցանկացած նորություն, ընդհուպ մինչև անձնական կյանքի մանրամասները:

Շատ մեծ երգրպագուների բանակ ունեն հիմնականում երգիչները և դերասանները: Կան դեպքեր, երբ դերասանը ձեռք է բերում երկրպագուներ իր խաղացած կոնկրետ դերի շնորհիվ: Հիմա շատ երկրպագու ունեն հատկապես հոլիվուդյան աստղերը: Սոցիալական կայքերում ամենաշատ երևացող կուռքերից են՝ Ջաստին Բիբերը՝ ով ընդամենը 17 տարեկան է, բայց հասցրել է դառնալ աշխարհահռչակ, Սելենա Գոմեզը, Մայլի Սայրուսը, Էմիլինո, Ավրիլ Լավինը և այլն: Այս մարդիկ սիրված են 13-17 տարեկանների կողմից, իսկ ավելի մեծերի ողմից՝ Ջենիֆեր Լոպեզը, Անջելինա Ջոլին, Լեդի Գագան և այլոք:

Շատ հոգեբանների կարծիքով հատկապես դեռահասները՝ ովքեր հասարակության ամենախոցելի հատվածն են, միանգամից տարվում են իրենց կուռքով, փորձում են ամեն ինչում կրկնօրինակել նրանց և անգամ չեն նկատում այն փաստը, որ վերջիններս մարդիկ են և ունեն բազում թերություններ:

Հարց է ծագում. արդյո՞ք սա բացասականորեն չի անդրադառնա նոր սերնդի վրա: Այս կապակցությամբ հոգեբան Արծվի Հարությունյանն ասաց, որ կուռքեր ունենալու մեջ ոչ մի վատ բան չի



տեսնում և ավելացրեց. «Մարդիկ նմանացնում են համակարգի վրա փորձում են դառնալ իրենց ընտրած իդեալի նման (չնայած, չեն ժխտում, որ այստեղ կա սեփական եսը կորցնելու ռիսկ): Կուռքն էլ դառնում է նրանց համար չափման միավոր, որին փորձում են ամեն կերպ հասնել: Մարդիկ կուռքեր ունենալով փորձում են հասնել ավելիին և եթե լավը փորձեն նմանակել, ապա ավելի լավ կլինի»:

Այն երիտասարդներն, ովքեր կարողանում են նմանակել իրենց սիրած արտիստին կարող են մասնացել հատուկ հաղորդաշարի, որը կոչվում է «My name is», այս հաղորդումը անցյալ տարվա օգոստոսից հեռարձակվում է նաև Հայաստանում Շանթ հեռուստաընկերության եթերում: Այն երաժշտական մյուս նախագծերից

առանձնանում է նրանով, որ մասնակիցները հանդես են գալիս ոչ թե իրենց, այլ արդեն հայտնի աստղերի կերպարանով:

Ըստ պատանիների շրջանում անցկացրած հարցման, դեռահասների հիմնական մասը տարված է արտասահմանյան արտիստներով: Նրանցից քչերը տվեցին հայ արտիստների անուններ: Իսկ այն հարցին, թե ի՞նչ են անում նրանց նմանվելու համար, պատասխանեցին. «Ուղղակի հագնվում ենք այպես, ինչպես նրանք և լսում ենք նրանց երգերը»:

Ի վերջո, այս երևույթը ոչ թե պետք է դարձնել հիվանդություն այլ փորձել հասկանալ նրա դրական կողմերը:

Սևակ Համբարյան և Մերի Մարանդյան

Գովազդի իրական վիճակը

Արդեն տևական ժամանակ է, ինչ մեր կյանքն առանց գովազդի չենք պատկերացնում:

Հեռուստատեսությունն ու ռադիոն ուղղակի ողողված են ամենատարբեր ձաշակի ու որակի գովազդներով ու գովազդաման մյուսթերով, որոնք էլ իրենց հերթին ակնդիրներին ու ունկնդիրներին ներկայացվում են բազմաթիվ գրագիտական, ուղղախոսական սխալներով ու օրենքի տարբեր կետերի խախտումներով:

Ներկայացնենք դրանցից ավելի հաճախ խախտվողները.

1. Գովազդի մասին» ՀՀ օրենք 9-րդ հոդվածի 1-ին կետ. Արգելվում է մինչև 10 րոպե տևողությամբ ռադիոհաղորդումներում և մինչև 20 րոպե տևողությամբ հեռուստահաղորդումներում մեկ անգամից ավելի գովազդային ընդհատումը (ընդմիջումը):

2. Գովազդի մասին» ՀՀ օրենք, 9-րդ հոդվածի 2-րդ կետ. Արգելվում է ռադիոհեռուստատեսային հաղորդման ընթացքում հեռարձակել գովազդ յուրաքանչյուր 1 եթերային ժամի հաշվով 14 րոպեից ավելի տևողությամբ: Եթերային ժամի հաշվարկը սկսել յուրաքանչյուր օր 00:00 ժամից:

3. Գովազդի մասին» ՀՀ օրենք, 5-րդ հոդվածի 1-ին կետ. ՀՀ տարածքում հեռարձակվող հեռուստառադիոհաղորդումների լեզուն գրական հայերենն է, բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի: Հեռուստառադիոընկերությունները պարտավոր են ապահովել իրենց հաղորդումների լեզվի անաղարտությունը:

Այժմ ձեզ ենք ներկայացնում ուշագրավ օրինակներից մեկը՝ «Ինգո Արմենիա»-ի գովազդում նկարագրվում է

դպրոցի մի իրավիճակ, որտեղ ուսուցիչն ու աշակերտը «հաճելի» երկխոսություն են ունենում.

- 3-րդ անգամ եմ ասում, տղա, ցած իջիր սեղանից:

- Թե չէ ի՞նչ, էէէէ, ես չգիտե՞ս ում տղան եմ:

Այնուհետև չկարողանալով դպրոցական սեղանի վրա պզզած, ծամոնով ձտտացնող լպիրշ տղային կարգի հրավիրել, ուսուցիչը պտտվում է ու մի ուժգին հարված հասցնում նրան՝ գցելով գետնին: Իսկ աշակերտը. «հեսա դու քո հալը կտենաս» ասելով զանգում է պապային՝ դպրոց մարդ ուղարկելու համար: Լպիրշ տղայի համարապարանցիները, տեսնելով ուսուցչի «քաջությունը», ոտքի են կանգնում ու ծափահարում:

Տեսահոլովակի սյուժեն ավարտվում է այսպես. «Ասում են՝ ավելի հեշտ է լինել անվախ, երբ առողջությունդ ապահովագրված է «Ինգո Արմենիայում»: Ինգո Արմենիա, վճարում ենք միշտ»:

Այդ գովազդը միանգամից խախտել է գովազդի օրենքի առնվազն 6 կետ: Դրանք են.

1. Գովազդի մասին օրենքի համաձայն, մեր երկրում գովազդի լեզուն գրական հայերենն է:

2. 6-րդ հոդվածի գ կետի համաձայն՝ «Արգելվում է հակաօրինական է համարվում այն գովազդը, որն իրականացվում է օգտագործելով քաղաքացիների բռնության, հարձակողականության, խուճապի, ինչպես նաև բարոյականության համընդհանուր նորմերի խախտման դրող կոչեր»:

3. Ը կետի համաձայն, արգելվում է այն գովազդը, որտեղ սպառողի կյանքին, առողջությանը կամ անվտանգուր-

յանը սպառնացող գործողությունների դրող կոչեր եւ փաստարկումներ կան:

4. Օրենքի 14-րդ հոդվածով արգելվում են այն գովազդները, որտեղ պարունակվում են տեսաձայնային այնպիսի դրվագներ, որոնք կարող են բարոյական կամ ֆիզիկական վնաս պատճառել անչափահասներին:

5. Նույն հոդվածի գ կետով արգելվում են գովազդները, որտեղ խաթարվում է ծնողների եւ դաստիարակների հեղինակությունը, անչափահասների վստահությունը նրանց նկատմամբ:

6. Արգելվում է անչափահասների կերպարների տեսաձայնային կամ այլ ձևով օգտագործումը գովազդում, եթե այն չի վերաբերում անչափահասների համար նախատեսված ապրանքներին:


Մենք ուղղակի ներկայցրեցինք ընդամենը 1 օրինակ, բայց... Դե հասկանում եք էլի...

ՀՀ-ում գովազդ սպառողների շահերն ամենևին էլ պաշտպանված չեն, որովհետև տարիներն անցնում են, բազմիցս խոսվում է այս թեմայով, բայց եթե մի բան էլ փոխվում է, ապա միայն նրանով, որ ավելանում են նման օրինակներն ու անպատժելիությունից ոգևորված ավելի են շատանում աղավաղումները: Վերջում, նկատելով, որ ամենայն հավանականությամբ բարձր վարձատրվող բազմաթիվ վերահսկողական կառույցներն իրենց ուղղակի պարտականությունների մեջ թերանում են, ապավինում ենք հեռուստառադիոընկերությունների տերերի ու աշխատակիցների ողջամտությանը:

Անահիտ Պողոյան Վաչե Մատինյան

Սոցյալական համացանցերը երիտասարդության կյանքում


Ներկայումս սոցյալական համացանցերը մեծ դեր ունեն երիտասարդության կյանքում: Շատ երիտասարդներ այսօր նախընտրում են իրենց ժամանակն անցկացնել համակարգչի առաջ, քան զբաղվել, օրինակ, ընթերցանությամբ: Այդ պատճառով շատ երիտասարդներ կտրվելով իրական աշխարհից դառնում են «վիրտուալ» աշխարհի մասնիկ կամ «ռոբոտ»:



Շատ հոգեբանների կարծիքով այն երիտասարդներն ովքեր շատ ժամանակ են անցկացնում համակարգչի առջև նրանք դառնում են ավելի դյուրագրգիռ, ինքնամոխի և չեն ուզում կտրվել վիրտուալ աշխարհից: Այս ամենը ըստ հոգեբանների հիվանդություն է պատանիների և երիտասարդների շրջանում:

Հետաքրքրությունից ելնելով և որոշ հարցերի պատասխաններ ստանալու ակնկալիքով, 2011թ.-ի Հոկտեմբեր ամսին կազմակերպեցինք հարցում Վանաձորի պատանիների և երիտասարդների շրջանում: Հարցմունքի պատասխաններից մենք հասկացանք, որ ժամանակակից պատանիների համար համակարգիչը ունի ուրույն նշանակություն: Նրանց մեծ մասը համակարգչից օգտվում է ոչ թե գիտելիքներ ստանալու համար, այլ նոր ծանոթություններ հաստատելու նպատակով:

«Одноклассники» համացանցից: Կային նաև այնպիսի երիտասարդներ, ովքեր համացանցից օգտվում են նորություններ և տեղեկություններ իմանալու համար:



Հրցվածների մեծ մասը օգտվում է "Одноклассники.ru" համացանցից: Կային նաև այնպիսի երիտասարդներ, ովքեր համացանցից օգտվում են նորություններ և տեղեկություններ իմանալու համար:

Այսպիսով մենք ևս մեկ անգամ համոզվեցինք, որ այսօրվա երիտասարդության կյանքում համացանցը երբեմն ավելի մեծ դեր ունի, քան իրական շփումը: Կարծում ենք, որ եթե երիտասարդները ճիշտ օգտվեն սոցիալական կայքերից, ապա նրանք կարող են զանազան և կարևոր տեղեկություններ քաղելով օգտագործել դրանք իրենց կյանքում, սակայն վիրտուալ շփումները չեն կարող դառնալ իրական կյանքի ռեալ այլընտրանք...



Վաչե Մատինյան

Սայաթ-Նովան կամաչեր



Չէի ասի, թե Վանաձորում չկան հանգստի գոտիներ ու այգիներ, սակայն դրանք ոչ միշտ են ծառայում իրենց բուն նպատակին: Այս մտորումները մեզ բերեցին Սայաթ-Նովայի անվան այգի: Շրջեցինք այգով, տեսանք նրա ներկայիս վիճակը՝ ջարդված նստարաններ, օրեցօր ավելացող աղբ, սակավ այցելուներ...

Հարց է առաջանում. այգու պատասխանատուներն իրենց հանգստը կանցկացնեն այսպիսի այգում, իրենց երեխաների հետ քայլելով աղբով լի տարածքով:

Մեզ անհանգստացրեց այգու այդպիսի վիճակն ու այդ անհանգստությունը մեզ տարավ Վանաձորի քաղաքապետարանի «Գույքի կառավարման և եկամուտների հավաքագրման» բաժնի պետ Վիկտոր Դարբինյանի մոտ: Նրա հետ հարցազրույցից իմացանք, որ Սայաթ-Նովայի անվան այգին վարձակալության է տրված «Արծիվ» ՍՊԸ-ին (տնօրեն՝ Վահան Մխիթարյան): 1997-2003 թթ. վարձակալության ընթացքում որոշակի բարեփոխումներ իրականացվել են, սակայն 2003թ-ից (երբ վարձակալության ժամկետը երկարացվել է մինչև 2013թ-ը) վարձակալը դադարել է իրականացնել իր իսկ կողմից ներկայացրած այգու զարգացման ծրագիրը: Հանգամանքի հետ կապված քաղաքապետարանը բազմիցս գրավոր և բանավոր զգուշացրել է, որպեսզի վարձակալն ամբողջությամբ կատարի իր ծրագրի կետերը:

Հարցազրույցի ընթացքում պարոն Դարբինյանը նշեց նաև, որ վարձակալող կողմն ունի ֆինանսական պարտքեր և քաղաքապետարանը դատարան հայց է ներկայացրել վերջիններիս վարձակալության իրավունքից զրկելու համար:

Համացանցից տեղեկանում ենք, որ ըստ ԱՐՄԵՆՊԸՆ-ի 2011թ. հուլիսի 14-ին տարածած հաղորդագրության հայցն ի սկզբանե ներկայացվել է ոչ թե վարձակալությունից զրկելու, այլ քաղաքապետարանի նկատմամբ ունեցած ֆինանսական պարտքերը մարելու:

լու համար: Մեջբերում ենք. «Ինչպես Արմենպրես»-ի հետ զրույցում նշեց Վանաձորի քաղաքապետարանի գույքի կառավարման և եկամուտների հավաքագրման բաժնի պետ Վիկտոր Դարբինյանը, այդ ժամանակահատվածում գրեթե ոչ մի ներդրում ընկերության կողմից չի կատարվել. այգին մնում է նույն անբարեկարգ վիճակում: Դրան էլ գունարվել է շուրջ 1 մլն դրամի կուտակված պարտքը: Այս հարցի առնչությամբ Վանաձորի քաղաքապետարանը հայց է ներկայացրել դատարան՝ այգու վարձակալից կուտակված պարտքը գանձելու նպատակով: Այստեղից կարելի է արդյոք եզրակացնել, որ եթե վարձակալը մարեր իր ֆինանսական պարտքերը, ապա հայցվորը իր խնդիրը լուծված կհամարեր... Ինչևէ, տեղեկացնենք նաև, որ դատարանը «Արծիվ» ՍՊԸ-ն ճանաչել է սնանկ: Քաղաքապետարանը ներկայացրել է երկրորդ հայցը՝ վարձակալության իրավունքից զրկելու նպատակով: Երկրորդ հայցը բավարվել է, սակայն «Արծիվ» ՍՊԸ -ն որոշում է բողոքարկել է՝ հայց ներկայացնելով վերաքննիչ դատարան:

Վիկտոր Դարբինյանն իր խոսքում նշեց, որ վերջ-



նական վճռից հետո, երբ այգին այլևս վարձակալ չի ունենա նրանք մրցույթ կհայտարարեն և կընտրեն նոր վարձակալ: Հուսանք որ այս անգամ նոր վարձակալը իր ներկայացրած ծրագրերը կիրականացնի բարեխղճորեն և հին սխալներից խուսափելու համար քաղաքապետարանը կցուցաբերի առավել աջակցություն:

Փորձեցինք կապվել նաև պարոն Վահան Մխիթարյանի հետ, սակայն նա քաղաքից բացակայում էր ու հեռախոսով խոստացավ հարցազրույց տալ հենց որ վերադառնա: Հուսանք, որ այն կկարողանանք տպագրել մյուս համարում:

**Վաչե Մատինյան
Անահիտ Պողոյան**

Էջ մի սատկի գարուն կգա



Դեռ ԽՍՀՄ-ի տարիներից Վանաձորը համարվել է Հայաստանի «Կանաչ» քաղաքներից մեկը: Բայց, ցավոք սրտի, այսօր Վանաձորը չի պահպանում իր «Կանաչ» տիտղոսը: Օրեցօր քաղաքում ավելանում է աղբը: Շրջեցինք մեր «Կանաչ» քաղաքով և ծամոթացանք նրա իրական պատկերին: Նկատեցինք, թե ինչպես են մեր համաքաղաքացիները վերաբերվում մեր քաղաքին. շատերը պոլիէթիլենային տոպրակներով աղբը բերում և դնում էին փողոցների մայթերից: Անցեք լճերի մոտից Երևանյան խճուղով մինչև Ներսիսյան փողոց և ոչ մի աղբաման չեք տեսնի: Իսկ փորձել եք քայլել Տանձուտ գետի ափով, «Թթու ջրի» հարակից տարածքով, որտեղ գետը ողողված է զանազան աղբով և կոյուղաջրերով:

«Բոլոր ծանապարհները տանում են Հռոմ...» և մեք հայտնվեցինք Վանաձորի քաղաքապետարանում: Քաղաքապետարանի կոմունալ տնտեսության և բարեկարգման բաժնի պետ Լյուկա Մելիքյանի հետ հարցազրույցից իմացանք, որ և 2011թվականին, և 2012թվականի կոմունալ ծախսերի համար նախատեսված բյուջեն մնացել է նույնը և կազմում է մոտ 200 մլն դրամ, որից 5 մլն-ը հատկացվել է մեծ աղբամանների տեղադրման և օգտագործման նպատակով, իսկ մայթերում տեղադրելու համար մինչև սույն թվականի հուլիս ամիսը Երևանից կերտվեն փոքր աղբամաններ: Այն հարցին, թե ի՞նչ պետք է արվի մինչև հուլիս



Մերի Մարանդյան

Պարը մեր համայնքում

Աշխարհում արագ թափով զարգանում են սպորտը, գիտությունը, արվեստը...

Չարգացման այս շրջանում պարտադիր է խելացի լինելու պայմանը, որն օգնում է մասնագիտանալ ու կայանալ որևէ ոլորտում: Օրինակ անդրադառնանք արվեստի բնագավառին: Այս առումով գրեթե սխալված չենք լինի, եթե ասենք, որ Հայաստանում արդեն առաջընթաց է նկատվում, բայց ասվածը հիմնականում կարելի է վերագրել Երևանին: Իսկ ասիա մեր քաղաքում մշակույթի զարգացվածության որակը բավարար չէ:

Վանաձորում գործում են բազմաթիվ պարի խմբեր, որոնք բոլորն ինքնաբավ են, բացի «Հորովել» երգի-պարի համույթից: Պարի խմբերը թվով մոտ 35-ն են: Բայց ի՞նչ է տալիս այսքան պարի խումբ ունենալը...

Այս հարցի շուրջ զրուցեցինք մեր քաղաքի պարուսույցներից մի քանիսի հետ՝ Ռաֆիկ Համբարձումյան, Տաթև Գալստյան, Արայիկ Գևորգյան:

Ռաֆիկ Համբարձումյանը դեռ երկար տարիներ պարել է բազմաթիվ համույթներում հիմա նա ունի խումբ, որը գործում է Վանաձորի Պ. Սևակի անվան 30 դպրոցում: Խումբը գործում է 2008 թվականից, որտեղ հիմա կա 20 երեխա:

- Ինչով է պայմանավորված մշակույթի լճացումը մեր քաղաքում:

- Դրա կարևոր պատճառը կարող էր պակասն է և վատ մասնագետների շատ լինելը: Մեր քաղաքում պարի որակը բավականին ընկել է:

Վանաձորում գործում է նաև «Տաթև» պարային խումբը, որի գլխավոր պարուսույցը Ֆլորա Ասոյանն է: Խումբը սկզբում անվանվել է «Ֆոլկ dance», իսկ 2009 թվականից վերանվանվել է «Տաթև» պարային համույթ: Այստեղ գործում են ինչպես հայկական, այնպես էլ սպորտային պարերի խմբեր, իսկ վերջերս բացվել է նաև վրացական պարի խումբ: Խումբը շրջագայում է ինչպես Հայաստանում այնպես էլ հյուրախաղերով եղել է արտասահմանում. 2009 թվականին՝ Բուլղարիայում և Հունաստանում, 2010 թվականին՝ Թուրքիայում և Վրաստանի Բաթում քաղաքում:


Քանի որ Ֆլորա Ասոյանն այս պահին գտնվում է երկրից դուրս, ապա մեր զրույցը տեղի ունեցավ Տաթև Գալստյանի հետ:

Վերը նշված հարցին նա պատասխանեց այսպես՝

- Լճացման պատճառը ասպարեզի բացակայությունն է, ինչպես նաև համերգների պակասը, և զավառական մտածելակերպը: Երկար տարիների պատմութ-

**Անահիտ Պողոյան
Վաչե Մատինյան**

Հոգով հայ



Հայ բազմաթիվ հայտնի մարդիկ ապրում են ՀՀ սահմաններից դուրս, բայց չեն դադարում մտածել սեփական երկրի մասին: Այդ մարդկանցից մեկն է Շառլ Ազնավուրը՝ աշխարհահռչակ երգիչը: Նա ծնվել է Ֆրանսիայում 1924թ. մայիսի 22-ին: Ամբողջ կյանքն ապրել է այնտեղ, բայց երբեք չի մոռացել իր հայ լինելու մասին: 1988թ. տեղի ունեցած Սպիտակի երկրաշարժից հետո, որը հազարավոր կյանքեր խլեց, նա հիմնել է բարեգործական ֆոնդ «Ազնավուրը Հայաստանի համար» և մի քանի ակցիա է կազմակերպել արհեստից տուժածներին օգնելու համար: Մեր մեծ հայրենակիցը պատրաստել է բարեգործական տեսահոլովակ

Անրի Վերնոյի և 90 այլ ֆրանսիացի երգիչ-դերասանների հետ միասին «Քեզ համար, Հայաստան» երգի համար: Տեսահոլովակը վաճառվեց ռեկորդային՝ 2 միլիոն օրինակով: Իսկ ավելի ուշ Ազնավուրն ստացել է դիվանագիտական անձնագիր և նշանակվել ՅՈՒՆԵՍԿՈՒՄ ՀՀ մշտական դեսպան: Այժմ նա Շվեյցարիայում Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպանն է: Յուրաքանչյուր հայ մարդ առանձնակի սիրով ու քնքշությամբ է արտաբերում այս մեծ հայի անուը:

Մարատ Գևորգյան

Չարմանք



Ես ապրում եմ Վանաձորում: Ինչքան մտովի պատկերացնում եմ իմ քաղաքը, միշտ տեսնում եմ անբարեկարգ փողոցներով... Թերևս չգիտեմ մի այնպիսի փողոց, որի վրա չլինի ժողովրդի լեզվով ասած «դար ու փոս»: Որոշ փողոցներում փորձում են այդ փոսերն ասֆալտապատել և ստացվում է տգեղ բան. այսպես ասած կարկատան են անում փողոցները, ընդ որում էլի անհարթ՝ տեղ-տեղ բարձր, տեղ-տեղ էլ ցածր: Ինչու: Միթե՞ հնարավոր չէ այնպես ասֆալտապատել, որ մակերեսը հարթ լինի:

Արման Եղիազարյան

Գուգարք համայնքը մեր օրերում

Մենք ամեն օր շփվում ենք մեր համաքաղաքացի հասակակիցների հետ և քաջատեղյակ ենք նրանց խնդիրներին: Դրա փոխարեն բոլորովին անտեղյակ ենք գյուղական համայնքներում ապրող պատանիների ու երիտասարդների խնդիրներից: Եվ այս հարցով մտահոգված գնացինք մոտակա համայնքներից մեկը՝ Լուռու մարզի Գուգարք համայնքը, որտեղ մեր հարցերին սիրով պատասխանեց Գուգարքի գյուղապետ Աշոտ Աշուրյանը:

- Պարոն Աշուրյան, ներկայացրեք խնդրեմ ձեր համայնքի կրթական համակարգը:

- Նախ սկսեմք մանկապարտեզից, քանզի երեխան իր կյանքի երկրորդ դաստիարակությունը ստանում է մանկապարտեզում: Գյուղում կա մեկ նախադպրոցական հիմնարկ, ուր հաճախում է 50 երեխա: Քանի որ այն գտնվում է համայնքի ծայրամասում, շատերը գերադասում են իրենց երեխաներին տանել Վանաձոր քաղաքի որևէ մանկապարտեզ: Մեր մանկապարտեզում հաճախակի կազմակերպվում են հանդեսներ՝ ավելի հետաքրքիր դարձնելով երեխաների մանկությունը: Գյուղում գործում է 2 դպրոց՝ հիմնական և ավագ, որոնցում սովորում են 450 երեխաներ: Դպրոցը տալիս է հիմնարար գիտելիքներ, այդ է վկայում գյուղից բուս ընդունվողների քանակը՝ տարեկան մոտ 30 դիմորդ: Ի դեպ, չմոռանա՞ցք նշել, որ գյուղի բյուջեից տրամադրվում է ուսանողական վարձ անապահով ապրող ուսանողներին: Դա ևս մի միջոց է բարձրացնելու գյուղացիների ու համայնքի զարգացվածության աստիճանը:

- Ինչպիսի աշխատանքներ են կատարվում համայնքում բնակվող երիտասարդների ազատ ժամա-

Նակը կազմակերպելու համար:

- Մենք փորձում ենք գործել այնպես, որ մեր պատանիներն ու երիտասարդները հնարավորություն ունենան իրենց ազատ ժամանակը լավ կազմակերպելու: Գյուղում գործում է մարզադպրոց, որտեղ մարզվում են 70-80 պատանի ու երիտասարդ, կա նաև մշակույթի տուն, ուր հաճախում է 40 երեխա: Բավականին մեծ ու հարուստ գրադարան ունենք, որտեղ իրենց ժամանակն են անցկացնում գրքասեր երեխաները: Ժամանակ առ ժամանակ գյուղում կազմակերպվում են սպորտային, կրամշակույթային միջոցառումներ:

- Իսկ ինչպիսին է ձեր համայնքի գյուղատնտեսական վիճակը:

- Գուգարք համայնքում գյուղատնտեսությունն այնքան էլ զարգացած չէ, քանզի բնակչության 70 տոկոսն իրենց հողերը հետ են տվել գյուղապետարանին, որով հետև գյուղում չկան վարող, ցարող մեքենաներ, որոնք կհեշտացնեին հողը մշակելու գործընթացը: Իսկ ով էլ որ հող ունի՝ տեղին չի օգտագործում, չնայած, իհարկե, դեռ կան հողագործությամբ զբաղվող մարդիկ: Ավելացնեն նաև, որ գյուղական համայնքներում ձեր հասակակիցներն ակտիվ ներգրավվում են գյուղատնտեսական աշխատանքների մեջ՝ օգնելով ծնողներին հաղթահարելու սոցիալական խնդիրները:

Հաջողություն ենք մաղթում Գուգարք համայնքին՝ մեր հասակակիցներին ցանկանալով ավելի լավ ու հետաքրքիր օրեր:

Գայանե Գրիգորյան Տիգրան Ասիկյան

Պատանիների զվարճանքի վայրերը...

Թե ինչպես են Վանաձորի պատանիներն իրենց ժամանցը կազմակերպում, փորձեցինք իմանալ հենց իրենցից՝ պատանիներից: Այն հարցին, թե մեր քաղաքում ինչպիսի ժամանցի վայրեր կան պատանիների համար նախատեսված, նրանց մեծ մասը պատասխանեց, որ շատ քիչ են այդպիսիք, և թվեցին եղածը: Ներկայիս պատանիներն ու երիտասարդներն իրենց հետաքրքրությունները փորձում են գտնել ակունքներում, դիսկոտեկներում, համերգներում և այլ ժամանցի համար նախատեսված վայրերում: Այդպիսի ժամանացի վայրեր ուղղակիորեն չկան մեր քաղաքում կամ եղածները չեն համապատասխանում կրտսեր սերնդի պատկերացումներին, ուստի վերջիններս իրենց ազատ ժամանակն անց են կացնում համակարգչի առջև:

Պարզելու համար, թե ինչպիսի միջոցառումներ են կազմակերպվում սպորտի և մշակույթի ասպարեզում, գրուցեցինք քաղաքապետարանի սպորտի բաժնի աշխատող՝ Սասուն Գուգյանի հետ: Պարզվեց, որ մեր քաղաքում կազմակերպվում են մի շարք սպորտային միջոցառումներ: Օրինակ՝ անց են կացվել Հայաստանի անկախության 20-ամյակին նվիրված համաքաղաքային վոլեյբոլի եվ բասկետբոլի մրցումներ, որոնց մասնակցել են 1996-97 թվականներին ծնված դեռահասները:

Չրուցեցինք նաև քաղաքապետարանի լրագրության բաժնի վարիչ Խորեն Գասպարյանի հետ: Նա նույնպես մտածում է, որ մեր քաղաքում այնքան էլ շատ չեն ժամանցի վայրերը: Ըստ պրն. Գասպարյանի՝ ժամանցի վայրերը սրճարանները չեն, այլ տարաբնույթ կրթօջախներն ու դիսկոտեկները, որոնց քանակը խիստ անբավարար է: Նա նաև նշեց, որ պատանիներն իրենց ժամանցը պետք է իրենք կազմակերպեն, սակայն նրանց մեծ մասը նախաձեռնող չէ: Պատանիները չեն կազմակերպում իրենց ժամանցը նաև այն պատճառով, քանի որ նրանցից շատերն աշխատում են կամ խճճված են ուսուցում-կրկնուսուցում համակարգում:

Մեր հասակակիցների հետ ունեցած հարցազրուցում մենք ձշտեցինք, թե նրանք ինչ ժամանցի վայրեր են նախընտրում: Շատերը ցանկանում են, որ մեր քաղաքում լինեն կարակե ակունքներ, բուլինգ, սահադաշտ և այլն: Շատերն էլ նշեցին իրենց դժգոհությունը ներկայիս այգիների անմխիթար վիճակից, որ այգիները միայն ձևական բնույթ են կրում և իրենց գլխավոր նպատակին չեն ծառայում: Նշեցին որոշ այգիներ, որոնց տարածքում չկան նույնիսկ մատարակներ:

Ասում են՝ հույսը վերջինն է մեռնում...

Անահիտ Սիմոնյան և Վաչե Մատինյան

Ինչ է նշանակում սիրել

Սիրել նշանակում է ապրել, Ապրել նշանակում է զգալ, Չզալ կյանքի քաղցրությունը, Դառնությունն ու տխրությունը, Չզալ կյանքի էությունը, Չարությունն ու բարությունը:

Սիրել նշանակում է տառապել, Տառապել նշանակում է պայքարել, Պայքարել կյանքի համար, Պայքարել մահվան դեմ, Պայքարել հանուն սիրո, Հանուն ազատության ու երջանկության:

Սիրել նշանակում է լինել սիրված, Լինել սիրված նշանակում է քեզ ունենալ, Դու ես իմ կյանքը, նրա իմաստը, Դու ես իմ սերը, իմ սիրո խոսքերը, Իմն ես, իմ սիրտն ես, նրա բաբախն ես:

Սիրել նշանակում է ապրել, Ապրել նշանակում է վայելել, Վայելել կյանքի բարիքներն ու հրաշքները, Կյանքի բույրն ու քաղցրությունը, Վայելել կյանքը ...

Սիրել նշանակում է ցանկանալ, ցանկանալ նշանակում է երազել, Երազել քո մասին, քո շրթունքների, քո աչքերի երազել քեզ գրկելու համբուրելու, Ո՛ր միայն քեզ սիրելու:

Ես սիրում եմ, ուրեմն ապրում եմ, Ես ապրում եմ, ուրեմն զգում եմ: Սիրում եմ ուրեմն տառապում եմ, Տառապում եմ ուրեմն պայքարում եմ: Սիրում եմ ուրեմն սիրված եմ, Սիրված եմ ուրեմն Քե՛զ ունեն:

Վաչե Մատինյան

Հրատարակիչ՝ «ԹՈՒՉՔ» հասարակական կազմակերպություն, «ԹՈՒՉՔ» թերթի խմբագրություն
Հասցե՝ Թատերական 6, հեռ.՝ 2-45-07
Խմբագիր՝ ԳՈՎՀԱՆՆԵՍ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

Ծավալը՝ 1 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 400 օրինակ
Համակարգչային ձևավորումը՝ Արմեն Օսիպովի

Տպագրության որակի համար պատասխանատու է տպարանը: Թերթը տպագրվել է՝ «ՍԻՍ տպագրատուն» ՍՊԸ-ում
ք. Վանաձոր, Շիրակացի 4^ա, հեռ.՝ 4-03-29